14.09.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

- «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2023 թվականի կարիքների համար գնանշման հարցման ձևով կազմակերպվել է «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում՝ թվով երկրորդ չափաբաժինի մասով միակ մասնակից է եղել ԱՁ Դավիթ Պետրոսյանը (47815982, էլ. փոստ՝ davagiv@mail.ru),
- ԱՁ Դավիթ Պետրոսյանի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջներին անհամապատասխանություններ, և մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները,
- Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում վերջինիս կողմից ներկայացված հայտը ընթացակարգի թվով երկրորդ չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել է (բացման և գնահատման նիստի արձանագրությունը կցվում է),

ԵՎ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անհատ ձեռնարկատեր Դավիթ Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար՝ հաշվի առնելով հետևյալը.

- «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-Ի 2023 թվականի կարիքների համար անհրաժեշտ համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի արձանագրություն N 2-ի (առ 30 օգոստոսի 2023թ.) 3.1 կետի համաձայն՝

«3.1 ԱՁ Դավիթ Պետրոսյանի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում 2-րդ չափաբաժնի մասով նշված է «կետայնությունը - առնվազն 1920x1080 FULL HD», իսկ ըստ հրավերի պահանջի կետայնությունը պետք է լինի առնվազն 3840x2160: Հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 8.8 կետը մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, որին ի պատասխան վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում՝ վերոնշյալ

չափաբաժնի մասով փոփոխություն չի կատարվել: Առաջնորդվելով սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետով մասնակցի հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժվում է:»:

2. Անհատ ձեռնարկատեր Դավիթ Պետրոսյանի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Տնօրեն՝ Դ. Ղուլյան